Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/8>> ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշենի նոր մանկապարտեզի կառուցման նախագծային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28 հուլիս 2017թ.
Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ռ. Եղիազարյան/ գնահատող /
	Ա. Գրիգորյան / գնահատող /
	Ֆ. Սարգսյան/ բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան
Բացակայում էր	
Հանձնաժողովի անդամ՝	Գ. Գևորգյան/ բացող /

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման պատասխանի մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<ԷԼՄԱ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ ---------- Ռ. Եղիազարյան

---------- Ա. Գրիգորյան

---------- Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Տ. Վասիլյան